P1 Ծեփամածիկ կավճային

Նկարագրություն

- Սպիտակ կամ թույլ երանգով
- Հանքային
- Էկոլոգիապես մաքուր և անվտանգ

Բաղադրություն

Կալցիումի կարբոնատ, կավիճ, լցանյութեր, մոդիֆիկացնող հավելանյութեր, ռեդիսպերսիոն փոշի:

Նշանակություն

Ծեփամածիկը նախատեսված է ներքին հարդարման աշխատանքներն ավարտին հասցնելու, ներկելուց առաջ չդեֆորմացվող՝ գիպսային, բետոնային, կրային, ցեմենտակրային, ցեմենտաավազային մակերեսները հարթեցնելու համար:

Մակերեսի նախապատրաստում

- Նախքան քսելը վերացնել հիմքի թույլ հատվածները, լայնացնել ճեղքերը:
- Մաքրել մակերեսը կեղտից, փոշուց, յուղի և ներկի հետքերից:
- Նախքան աշխատանքները սկսելը անհրաժեշտ է ակրիլային խտանյութով մշակել թույլ հատվածները և ներծծվող մակերեսները:
- Խորհուրդ է տրվում մակերեսը մշակել «ՇԵՆ» ֆիրմայի ակրիլային կոնցենտրատով:
- 4 ժամ անց սկսել հարդարման աշխատանքները:

Շաղախի պատրաստում

- Մաքուր տարայի մեջ լցնել 475-500 մլ ջուր՝ 1կգ չոր շաղախի համար:
- Աստիճանաբար ավելացնել չոր շաղախը և խառնիչի օգնությամբ խառնել մինչև համասեռ խառնուրդ ստանալը:
- Պատրաստի շաղախը 5 րոպե հետո կրկին խառնել, որից հետո այն պատրաստ է օգտագործման համար:

Օգտագործում

- Համասեռ խառնուրդը մակերեսին քսել չժանգոտվող ծեփիչի կամ մածկաթիակի օգնությամբ:
- Աշխատանքներն իրականացնել+10°C-ից ոչ ցածր ջերմաստիճանային պայմաններում:
- Հարթ մակերես ստանալու համար չորանալուց հետո կատարել մակերեսի հղկում:
- Աշխատանքներն ավարտելուց հետո գործիքները լվանալ ջրով:
- Օգտագործված պարկերը և շաղախի մնացորդներն աղբահանել սահմանված կարգով:
- Շաղախի արագ չորացման համար ապահովել տարածքի օդափոխությունը:

Քսվող մակերեսի ջերմաստիճան	+10°C-ից +30°C
Ջրի քանակ1կգ չոր շաղախի համար	475-500մլ
Ջրի քանակ 10կգ չոր շաղախի համար	4,75-5լ
Ջրի քանակ 30կգ չոր շաղախի համար	14.25-15լ
Շերտի հաստություն	0,1 -1,5մմ
Թաց շաղախի օգտագործման ժամկետ	12 ժամ
Քսված շերտի կծկում	ոչ ավել քան 0,8մմ/մ
Շերտի 1մմ հաստության դեպքում չոր շաղախի ծախս Նյութի ավելի ստույգ ծախսը կախված է օգտագործվող մակերեսի հարթությունից և քսվող ծեփամածիկի շերտի հաստությունից:	0.5 կգ / 1 մ²
	10 կգ / 20 մ²
	30կգ / 60 մ²

Փաթեթավորում

Թղթե և պոլիպրոպիլենային պարկեր՝ համապատասխանաբար 10 և 30 կգ զտաքաշով:

Պահպանում

Պահպանել չոր միջավայրում և չվնասված պարկերով փայտյա տակդիրների վրա, +40՛C-ից ոչ բարձր ջերմաստիճանի և 75%-ից ոչ բարձր օդի խոնավության պայմաններում: Պահպանման ժամկետը՝ փաթեթավորման վրա նշված արտադրման օրվանից 12 ամիս:

Անվտանգության կանոններ

- Պահել երեխաների համար անհասանելի վայրում:
- Աշխատանքներն իրականացնել՝ պահպանելով շնչառական օրգանների ապահովությունը:
- Խուսափել մաշկի հետ շփումից:
- Աչքի մեջ ընկնելու դեպքում աչքը լվանալ մաքուր ջրով, անհրաժեշտության դեպքում դիմել բժշկի:

Ուշադրություն

- Խառնուրդի խտանալուց հետո չի թույլատրվում ջուր ավելացնել, քանի որ դա կհանգեցնի խառնուրդի կպչողունակության նվազմանը և կնպաստի ճաքերի առաջացմանը:
- Այլ պայմաններում աշխատանքների իրականացման դեպքում վերոնշյալ ցուցիչները կարող են շեղվել:
- Արտադրողը պատասխանատվություն չի կրում աշխատանքների ոչ ճիշտ կատարման դեպքում: դեպքում: